ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ՄՈՎՍԷՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Ուղղագրութիւնք)

Է.Չ 13. տող 1.

" Զանապատ խաղացմունս աստուածայնոցն ի քեզ շնորհացն, և զանդուլ Հոգւոյն ի վերայ քո իմացուածոցդ շարժմունսն ծանեայ ի ձեռն գեղեցիկ գրոյս ,, ։ Ուղղ. իմացուածոցն շարժմունսն ։ Խորենացին Սահակայ Բագրատունւոյ խնդրածը, իբր գերբնական իմն ներշընչումն համարելով, կը գրէ թէ մարմնոյդ ծանօթութենէն առաջ գիտացի՝ աստուածայնոցն ի քեզ շնորհացն և զանդուլ Հոգւոյն իմացուածոցն։

digitised by A.R.A.R.@

Էջ 14. տող 3.

“Զի եթէ վասն բանին մեք, որպէս ասի, պատկեր Աստուծոյ, և զարձեալ՝ առաքինութիւն բանականին է խոհականութիւն ,, : Ուղղ. “եմք... և զարձեալ առաքինութիւն՝ (բութ)... Այդ տեղ դերանունը միտք չունի. իսկ էական բայը կը լրացնէ իմաստը: իսկ “զարձեալ ,,ին փոխանակելով թէ շաղկապը՝ յարմար կը թուի բութի տեղափոխութիւնը:

Էջ 14. տող 12.

“Ի ձեռն որոյ և զայսորիկ զսկզբնատիպն ասիս ուրախացուցանել, գեղեցիկ և չափաւոր մոլութեամբ յայսոսիկ մոլեալ և զակատեալ ,, : Ուղղ. կարիս սնմանացուցանել? Իբր թէ Սահակ նախամեռնող խնդրոյ պատմութեանս, իբրեւ սկզբնատիպ ուսումնասէր անձի, պատմութեան էջերով կամենայ անմահանալ: Հմմտ. “Ա՛ռ որով տեսանեմ և զայս... և յայսպիսիս պատկառնուոր ոնիլ յարձանագրուրիւնս բանից ,, :

Էջ 16. տող 11.

“Քանզի ոչ թագաւորք ցունաց՝ միայն որպէս աշխարհակալութեամբ, այլ և որ ինչ իմաստուրեան ևն ջանք փոյթ յանձին կալան աւանդել ցունաց ,, : Ուղղ. աշխարհակալութեանն: Թագաւորքն ցունաց որպէս աշխարհակալութեան, նոյնպէս և իմաստութեան ջանք չինայեցին ուսուցանել ցունաց:

Էջ 18. տող 1.

“Այլեւ զմեծամեծս և զզարմանալոյ արժանաւորս յարուեստից և ուրեք ուրեք գտեալ աշխատութեամբ ,, : Ուղղ. “յարուեստիցն ուրեք ուրեք գտեալ ,, :

Էջ 24. տող 1.

“Ցաղագս արմատոյն հանուրց մարդկութեանս... թէ ընդէ՞ր հակառակ Հոգւոյն խորհել անմիաբանեցան այլքն ի պատմագրաց ,, : Ուղղ. միաբանեցան? Հակառակ Հոգւոյն խորհողները միաբան լինելու են հարկաւ:

Էջ 26. տող 18.

“Եւ սա (Ադամ) ի բերանոյ Աստուծոյ առեալ ասի պատուէր, այլ և յանցուցեալ և թագաւեան եղեալ, զՈ՞ւր են յԱստուծոյ և ոչ յայլ ումեքէ հարցանի. սապէս և զվՀիռ վարկին ի Նորին բերանոյ լսէ ,, : Ուղղ. զվՀիռ հարկին այսինքն մահու:

Էջ 27. տող. 7.

“Թեւ որոյ ոչ բանի ինչ ստուգածայնոյ և ոչ յայտնութեան ինչ իրիք եղելոյ, ի տարակուսանս և յանյուսութիւն ազգ մարդկան հատեալ լինի, այլ և ինքնահաճոյ արդարեւ գործս ,, : Ուղղ. ինքնահաճոյ յարդարեւն գործս:

Էջ 36. տող 6.

“Բայց թէ ըստ նշանաւոր և անուանի լինելոյ՝ ոք պատեհ համարել ,, : Ուղղ. բութի տեղափոխութեամբ. “և անուանի լինելոյ ոք՝ պատեհ համարեալ ,, :

Էջ 38. տող 23.

“Բայս ես այժմ ուրախացայց հաւատով առաջիկայիցս իմոց բանից ի սիրելոյն իմմէ և բան զշատս յարդարախօսողէ ի բիւրոսեանն Սիբեղդեայ ,, : Ուղղ. քաղ առնելով. կամ հաւատերով? Սիբիլլայից մատեանէն կամ քաղեր է կամ հաւատեր է իւր ասածը ծերունին, և այդ գիւտի համար է ուրախութիւնը:

Էջ 43. տող 9.

“Իսկ ի կրոսերագունից որդւոցն Նորա Ցուրբան անուն ,, : Ուղղ. Ցուրբան? ըստ այժմու բեւեռագրոց ընթերցանութեան. յորմէ նախնի Ցուրուբերան գաւառն:

Էջ 46. տող 22.

“Եւ այլ որչափ միտք քո և քաջութիւն հատանէն, զի սահմանք քաջաց, ասէ, զէնն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի ,, : Ուղղ. հասանէ? Միտք և քաջութիւն հասանել կարեն ուրեք, քան թէ հատանել, դեռ եւս չունենալով իւր իրաւանց տակ:

Էջ 60. տող 13.

“Զկնի այսորիկ դառնալ, ասէ, Հայկին ի նոյն տեղի բնակութեան. և Կադմեայ բոռին իւրում բազում ինչ յանկածէ պատերազմին պարգեւեաց, և յիւրոց ընտրածնացն արս անուանիս: Հրամայէ զայն տեղի բնակութեան ունել նմա զառաջնոյ իւրոյ տանն ,, : Ուղղ. կիտաղրութիւնք. և Կադմեայ՝ (բութ)..... պարգեւեաց (Զկնել

digitised by A.R.A.R.@

ստորակէտ) .... արա անուանիս (Ջնջել վերջակէտ, և դնել ստորակէտ)։ Հայկ կը հրամայէ Կադմոսին բռնել իւր առաջին տան տեղը, տալով անոր պատերազմի աւարէն պարգևներ, նաեւ իւր ընդոծիններու լաւերէն։

Էջ 62. տող 8.

" Եւ (առ) ստորոտովք լերանցն բազում ականակիտ բղխեալ աղբիւրք, որ գետոց հաւաքումն եղեալ հեզաբար առ սահմանօք նոցա, ծնիւք յերամբք և եզերօք դաշտին՝ պատանիք ոմանք իբր երիտասարդուհիք ճեմիցեն ,, Ուղղ. ծնօտիւք յերանց և գերեսօք դաշտին? Խորենացին՝ աղբիւրներէն բղխած ջրերէն ձեւացած գետերը կը նմանցնէ երիտասարդուհիներու, որոնք մանուածապատ լերանց ծնօտի (փոխանակ կրկնելու ատորոտ, զոր սուղ ինչ վերեւ գրած է) տակից և դաշտի երեսէն կ'ընթանան։

Էջ 62. տող 20.

" Եւ առ փոքր փոքր ի շեշտումն անկեալ ,, Ուղղ. առ ի շեղ իմն? Եւ արդարեւ մեծ Մասիսն դէպի հարաւ կոյս կորացած թուի։

Էջ 65. տող 20.

" Յահմանս հատանէ նմա ժառանգութեան ի ծովէն ընդ արեւելս մինչեւ ցդաշտ մի, որ Երասխ հատեալ զքարանձաւս լերանց ,, Ուղղ. ուր։

Էջ 69. տող 8.

" Եւ որ ի տէգ նիզակի կամակարողք, նորատիք և հարուստք յոյժ և յայլոցանձևնուորին իսկ և երեսաւորք, որ ի սիրտ և ի պատրաստութիւն իբր թէ բիւրս հինգ ,, Ուղղ. "յայլոցանձևոն իսկ.... միասիրտ ի պատրաստութիւն ,, ?

Էջ 74. տող 6.

" Անուանէին հինգ աշխարհին՝ Մաժակ, որպէս ոչ կարելով՝ ուղղախօսել. մինչեւ յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ կեսարիա ,, Ուղղ. Ցոչեայ? Հմմտ. էջ 195...

Էջ 76. տող 15.

" Բայց Արամ յետ ամի կենաց իւրոց ծնաւ զԱրայն. զկնի որոց և այլս բազումս կեցեալ ամաց, մեռաւ ,, Դիտելի է որ երկու տեղն եւս բաց թողուած են տարբերոյ թուերը, անշուշտ օրինակագրի մէջ հայկական տառերով գրած լինելու էր, զոր չկարելով գիտնալ ընդօրինակողն բաց թողեր է ... ուղղ. զկնի որոյ, այսինքն Արայի։

Էջ 77. տող 5.

"Իսկ յետ վախճանելոյն կամ փախստական լինելոյ Նինոս ի կրետէ ,, ուղղ. Նինոսի։

Էջ 78. տող 2.

" Բայց որչափ դիմաց էր նշանակել, ոչ այնչափ ինչ ի սպանանել զնա և ի հալածել փութայր, քան թէ ,,... Ուղղ. դիրիմաց էր։

Էջ 80. տող 7.

" Այս կեցեալ ամս, ծնաւ զԿարդոս ,, դիտ. պակասի թիւն։

Էջ 82. տող 8.

" Ի յարեւելից կողմանէ հաճեցեալ բլրոյն՝ ձեռն մի փոքրագոյն ,, Ուղղ. առ ձեցեալ բլրոյն իբրեւ լեռն մի փոքրագոյն ,, Ըստ բնագրին՝ անիմաստ է պարբերութիւնդ, իսկ բարեփոխեալ յայտ առնէ որ "առ եզերք գետոյն երկայնաձեւ բլրի,, (էջ 81. տող 12). արեւելեան կողմն աւելի իմն բարձրանալով կ'առնու փոքրագոյն լերան մը ձեւը, և " ասա իմն ակնկառոյց լեալ.. Շամիրամ ,, կը շինէ իւր քաղաքը։ Ըստ մեզ նոր պարբերութիւնը նոր տողով սկսելու է. " Ի յարեւելից կողմանէ աճեցեալ բլրոյն իբրեւ լեռն մի փոքրագոյն՝ ասա իմն ակնկառոյց լեալ ,, եւայլն։

Էջ 85. տող 19.

" Որոյ որպիսութիւն գրութեանն յօրինուածոյ ,, Ուղղ. դրութեանն?

Էջ 91. տող 5.

" Բայց զուգութիւն բարբառոյ և հաւասարութիւն թուոյ կարգի պատանեաց՝ զեշմարտութիւն աշխատասիրութեանս մերոյ ակնարկէ ,, Ուղղ. Պատմութեանց։ Հմմտ. " Յարմարեալ զամենայն... յորոց մեք արդարապէս ջանացաք հաւաքել զհնագրութիւնս։ Եւ ասեմք լինել արդարաբան

digitised by A.R.A.R.@

ի պատմութիւն յայսմիկ ըստ մերոյ յօժարութեան և ուղղամտութեան ,,. (էջ 90. տող 10)։

Էջ 99. տող 21.

" Գանգի վարքակէս գաւառաւ մեղացի, ի փոքուէ կողմանց ծագաց գաւառին ամրաձունի ,,. դիտ. ծագաց ոչ է հասարակ անուն, այլ յատուկ որ թուի լինել Շագաց կամ Սագաց։ Հմմտ. Խորենացի էջ 501. տող 20.... Եղիշէ էջ 79. տող 14։ Ինչհիհեան Սոսոր. Հին Հայատ. էջ 340. տող 15...?

Էջ 110. տող 17.

" Բայց էր նիւթ այսպիսւոյ... առ Տիգրան յորմէ բազում և անուն քնոյ ի բաց փախուցեալ լինէր յԱշղտահակայ յիշատակաւս այսուրիկ ,,։ Ուղղ. հարկ քնոյ?։ Քունն ոչ անուն ինչ է, այլ բնական հարկ, որ վախի կամ տկարութեան պատճառաւ կը փախչի աչքերէն։

Էջ 133. տող 1.

" Զպղատոնականն համարձակագոյն այժմ բարբառիմ. իսկ արդ արդեաք իցէ սիրելւոյ այլ ոք ես. քանզի և չէ իսկ ոք ,,։ Ուղղ. Ընդել նախընթաց արդ, զի երկու շաղկապք աւելորդ են։

Էջ 135. տող 19.

" Եւ այս, որ զսովորեալ չարութիւն նիւթէր ,,։ Ուղղ. " Եւ այսն որ զսովորեալ չարութիւնն նիւթէր ,,։ խմասոր կը պահանջէ գիմորոշ յօդերը։

Էջ 154. տող 3.

" Եւ զգաղատացիս հարեալ ընդ հարկիս կացոյց, և զթագաւորութիւնն ասիացւոց ,,։ Ուղղ. փոխադրելով կիտադրութիւնը. " Եւ զգաղատացիս հարեալ, ընդ հարկիս կացոյց և զթագաւորութիւնն ասիացւոց ,,։

Էջ 161. տող 7.

" Եւ զշերմութիւնն կոչոյ ի մարմանդս այգեաց և բուրաստանաց ,,։ Ուղղ. կոտոյ? Եւ միայն անուանի իւր այգիներով և բուրաստաններով Այրարատեան դաշտն է իւր բոլոր երկարութեամբ, սկսած Երասխաձորի բերանէն մինչեւ հասնի Նախճաւանն. և այժմ Երեւանեան գաւառն անուանի իւր այգիներովը՝ կը համապատասխանէ հին կոտոյ գաւառին, ուստի Խորենացւոյ գովեստը ասոր կը յարմարի։ Նոյն իսկ Բուլղարաց գաղթականութիւնն գրաւելով վանանդը, և բնակելով " յարգաւանդ և հացաւէտ տեղիս ,, " Ներքոյ կոտոյ ,,, աւելի կը յարմարի կոտոյից, որովհետեւ Արշարունիք կամսարականաց մերձակայ կալւածները որ անմիջապէս սահմանակից են Այրարատեան դաշտին, արդարեւ արգասանոյ և հացաւէտ տեղիք են։

Էջ 161. տող 9.

« Այլ խորեմ ասա վասն սիրելի առնն յայսմնի գրել զամենայն և մանրապատում »։ Ուղղ. « Այլ Ընտրեմ կամ կամիմ »? Չի խորել բայի բուն նշանակութիւնը շատ հեռի է Ընտրելէն։

Էջ 163. տող 3.

" Բանգի բազում ինչ.... և որ նման այսոցիկ »։ Դիտ. այս պարբերութեան մէջ կը պակասի բայը?

Էջ 163. տող 15.

« Եւ զկոչեցեալն Բագարատ, որ ի Հրէիցն, շնորհակալութիւն նմա վասն յառաջագոյն անձնատուր ձեռնտուութեան առ Թագաւորն ,,։ Ուղղ. նոյ նմա։

Էջ 165. տող 3.

« Եւ զԱծրունիսդ գիտեմ՝ ոչ արծրունիս, այլ արծիւ ունիս, որք արծուիս առաջի Նորա կրէին ». Se non è vero è ben trovato։ Բայց հակառակ մեր ծերունոյն՝ չենք կարող դիտել թէ « Արծրունիս » ոչ « արծիւ ունիս » է, այլ Արծունիս ի գաւառէն զոր պարգեւեաց Վաղարշակ « Շարաշանայ? ի տանէ Սանասարայ »? Հմմտ. Խոր. էջ 173. տող 1։

Էջ 173. տող 14.

« Իսկ զԱշտունիս և Գողթնեցիս գտի պատմեալ ի Սիսականէն արդարեւ հաստատած, ոչ գիտեմ, թէ յանուն արանցն զգաւառն անուանեն, և թէ յանուն գաւառացն զնախարարութիւնն կոչեցեալ »։ Ուղղ. կիտադրութիւնք. « արդարեւ հաստատած՝ ոչ գիտեմ. (քանզի) թէ յանուն արանցն զգաւառն անուանեն և թէ յանուն գաւառացն զնախարարութիւնն կոչեցեալ »։ Խորենացի թուի ասել որ Ուրշ-

digitised by A.R.A.R.@

տունիքն և Գողթնեցիքը Ամսական աշխարհն լինելը գտայ պատմուած, բայց թէ նոքա գաղութ են իսկապէս, չգիտեմ. որովհետեւ թէ գաւառի և թէ տոհմի անունը մի և նոյնն են։

Էջ 174. տող 26.

« Հրաման տայ քաղաքացեաց մարդկան արգոյ և պատիւ լինել քան զգեղջկաց »։ Ուղղ. պատուով կամ ի պատուի, ոչ անշուշտ արդոյապատիւ ?։

Էջ 177. տող 24.

« Բայց այլքն յանձն առնուն այսչափ միայն, ի շաբաթու հեծանել յորս և ի պատերազմունս, և զմանկունսն թողուլ անթլփատ, յորժամ լինիցին. քանզի անկին էին։ Եւ հրամայեցաւ յԱրշակայ մի՛ տալ նոցա կանայս »։ Ուղղ. կիտադրութիւնքն. « և զմանկունսն թողուլ անթլփատ յորժամ լինիցին։ Քանզի անկին էին, և հրամայեցաւ յԱրշակայ մի՛ տալ նոցա կանայս »։ Արշակ երկու պայման առաջարկեր էր. 1. շաբաթ օրեր որսի և պատերազմի գնալ, և 2. թլփատել մանուկները։ Ուստի փորձութեան մատնուած բազմաունիք անկիւն լինելով, թագաւորը կը հրամայէ չտալ կանայս մինչեւ որ այդ երկու պայմանները յանձն չառնուն։ Իսկ ըստ բնագրին կը հետեւի անկիւն մարդկան զաւակները եթէ ծնանին՝ թլփատուն ! իսկ կարգուածներուն ?

Էջ 178. տող 19.

« Քանզի նա բովանդակ փոխադրեաց և որ ինչ ի քարտէսս դիւանին Եդեսիոյ՝ որ է Ռոհայ, որ յաղագս թագաւորացն մերոց պատմէր. որ մատեանքն ի Մծբնայ էին փոխեալ անդր »։ Ուղղ. « որ է ռոհայ » glossa « ... որ մատեանքն ի Մծբնայ էին փոխեալ անդր »։

Էջ 184. տող 19.

« Եւ յառաջ քան յԱսիա հասանելն՝ յեստիկէ դղեկին քարոզեցաւ »։ Ուղղ. յԱստիկէ դղեկին ?՝ յԱկրոպոլին՝ համբաւն հռչակեցաւ։ Հմմտ. էջ 186. տող 2 ներքեւ. « և համբաւն հիացուցանէր զհելլենականն »։

Էջ 187. տող 2.

« Ղովկրացիք տենեմատուրք եղեն, Բիւտացիք մասն եւ ի կազմածոյ նորա »։ Ուղղ. Բէովտացիք մտանեն ի կազմ զօրաց նորա ?՝ Ղոկրացիք ակամայ անձնատուր եղած են, իսկ Բէովտացիք երեւի կամաւոր կերպով և թերեւս զինուորեր են իսկ անոր բանակի մէջ. իսկ Ամթէնք գուցէ յառաջագոյն ձեռնտու եղած է, անոր համար ալ չի թուարկուիր տիրապետուած ազգերու մէջ։

Էջ 192. տող 14.

« Եւ ինքն ոչ հետամուտ լինել նմա, այլ ընդ Ասորիս Հրէաստան փութայ հասանել »։ Ուղղ. « լինի նմա »?

Հ. Գ. Նազարեան

ՊՐՈՖ. ԼԵՄԱՆԻ

Նիւթեր Հայաստանի հնագոյն պատմութեան.

Ցաւելուած զոկտ. Մարքս ֆան Բերշէմի, «Արաբական արձանագիրք Հայաստանէն և Տիարպէքիրէն»։

Թիւ 21. Աղամանասար Բ՝. ժայռի արձանագրութիւն, Տիգրիսի—անցքին բերանը։ Շատ աւելի գետն ի վեր քան նախորդ արձանագրութիւնն Թիւ 20, նոյն կողմի վրայ և երկու զանազան տեղեր, և նաեւ տողքն 15–17՝ յոյժ գետն ի վեր և անցքին ներսը փորուած են։ Մինչեւ հիմայ ոչ ոք զայն մանրամասն նկարագրեց. զի Տէյլոր (Taylor) (*ինչպէս նաեւ յետ իմ այցելութեան իմ ճանապարհի ընկերս*) զայն չտեսան։ Սեստէրի (Sester) օրինակութեան (Abklatsch) վրայէն Շրատէր (Keilinschr. Bibl. էջ 9–12 և 20) այս երկու մասերուն նոյնութիւնը և միանգամայն Աղամանասար Բ՝ վերաբերիլը ճանչցաւ։

1. Ասուր, Ին, Շամաշ
2. Ադադ, Բշդաթ են ստուգածք մեծք,
3. որ սիրեն իմ թագաւորութիւնս և

digitised by A.R.A.R.@